# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/3- 1

ք.Երևան «15» 10 2025թ.

«Վարչապետի աշխատակազմն» ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Գարանտ Մոթորս» ՍՊԸ** -ն, ի դեմս տնօրեն Դ.Շախբազյանի, որը գործում է **ՍՊԸ-ի կանոնադրության** հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ Վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվող **Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար, ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով և N 1.1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում և N 1.1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով և N 1.1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով և N 1.1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>15</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **4750000** (չորս միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված **գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով**: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված **ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:**

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված **գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:**

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում սույն ենթակետի կիրառման դեպքում գործակալ չի կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 20.06.2025թ. թիվ 817-Ա որոշմա ն 2-թդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված կազմակերպությունը :[1]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[2]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից **տասնհինգ** աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.17 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են **Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին՝** բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>Կառավարական տուն 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ<br>ՀՎՀՀ 02505554<br>-------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «Գարանտ Մոթորս» ՍՊԸ<br>Հասցեն՝ ք.Երևան, Թբիլիսյան խճ. 20<br>«Արդշինբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2470075092810000<br>ՀՎՀՀ 01310872<br>Տնօրեն<br>------------------------------- Դ.Շախբազյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 1
«    »    2025թ. կնքված
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/3-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 50111130/531 | ՎԱԶ-20214-126-20 և CHEVROLET NIVA տեսակի (քանակը՝ 15 հատ, և 2 հատ) ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն հավելված 1.1-ի | դրամ | 4750000 | 1 | Ծառայության մատուցումը՝ ք. Երևան, մատակարարի գործունեության հասցե, իսկ մատուցման արդյունքը հավաստող փաստաթղթերը՝ ք. Երևան, Կոմիտաս 49/2 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 410 օրացուցային օրվա ընթացքում |

**հավելված 1.1**

| Հ/Հ | SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները ըստ չափաբաժինների |
|---|---|---|
| | | Չափաբաժին 1 |
| | | ՎԱԶ-20214-126-20, CHEVROLET NIVA , |
| 1 | 2 | 3 |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 1400 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 1400 |

| | | |
|---|---|---|
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 1400 |
| 4 | Արտացման համակարգի ստուգում | 1400 |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | 1400 |
| 6 | ՓՏ-ի աշխատանքի ստուգում | 1400 |
| 7 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | 1400 |
| 8 | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | 1400 |
| 9 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | 1400 |
| 10 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | 1400 |
| 11 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 1400 |
| 12 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 1400 |
| 13 | ABS համակարգի ստուգում | 1400 |
| 14 | էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 1400 |
| 15 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 1400 |
| 16 | Թափքի վիճակի ստուգում | 1400 |
| 17 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 1400 |
| | **SU-1 ներառվող ծառայությունների անվանումը** | |
| | **1. Շարժիչ** | |
| 18 | Շարժիչի հանում և տեղադրում | 13998 |
| 19 | Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում | 27997 |
| 20 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 27997 |
| 21 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | 36396 |
| 22 | Շարժիչի վերանորոգում | 83990 |
| 23 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 5039 |
| 24 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 4479 |
| 25 | Նույնը աջի համար (V6) | 6719 |
| 26 | Նույնը ձախի համար (V6) | 4479 |
| 27 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 19598 |
| 28 | Նույնը աջի համար (V6) | 22397 |
| 29 | Նույնը ձախի համար (V6) | 8399 |
| 30 | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում | 8399 |
| 31 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | 22677 |
| 32 | Փականի խցուկի փոխարինում | 1512 |
| 33 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում | 8959 |
| 34 | Նույնը V6-ի ձախի դեպքում | 16518 |
| 35 | Նույնը V6-ի աջի դեպքում | 16518 |
| 36 | Նույնը DOHC դեպքում | 8959 |

| | | |
|---|---|---|
| 37 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում | 11479 |
| 38 | Հրիչի փոխարինում SOHC | 1512 |
| 39 | Նույնը DOHC դեպքում | 1008 |
| 40 | Ատամնավոր փոկի փոխարինում | 22677 |
| 41 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 6439 |
| 42 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 18478 |
| 43 | Մխոցային օղակների փոխարինում | 39195 |
| 44 | Թափանիվի հանում և տեղադրում | 10919 |
| | 2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | |
| 45 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 896 |
| 46 | Յուղի պոմպի փոխարինում | 3640 |
| 47 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 9239 |
| 48 | Բռնկման կարգավորում | 2520 |
| 49 | CO կարգավորում | 1400 |
| 50 | խարնարակի հանում և տեղադրում | 2296 |
| 51 | Խարնարակի վերանորոգում | 2632 |
| 52 | Օդի զտիչի փոխարինում | 952 |
| 53 | Ինժեկտորի ֆորսունկայի փոխարինում | 2520 |
| 54 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 6719 |
| 55 | Բենզամղիչի փոխարինում | 2520 |
| 56 | Վառելիքի զտիչի փոխարինում | 2520 |
| 57 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | 4032 |
| 58 | Տրամբլյորի հանում և տեղադրում | 1512 |
| 59 | Տրամբլյորի վերանորոգում | 1008 |
| | 3. Սառեցման և արտածման համակարգ | |
| 60 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 924 |
| 61 | Հովհարի հանում և տեղադրում | 5487 |
| 62 | Ռադիատորի հանում և տեղադրում | 7279 |
| 63 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 7279 |
| 64 | Ռադիատորի վերանորոգում | 13998 |
| 65 | Թերմոստատի փոխարինում | 4200 |
| 66 | Ջրի պոմպի փոխարինում | 4200 |
| 67 | Ընդարձակող բաքի փոխարինում | 1400 |
| 68 | Խլարարի հանում և տեղադրում | 1960 |
| 69 | Նույնը DOHC դեպքում | 2520 |
| 70 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 2520 |

| | | |
|---|---|---|
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | |
| 71 | Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում | 7559 |
| 72 | Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում | 5039 |
| 73 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 11479 |
| 74 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | 2520 |
| 75 | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում | 2520 |
| 76 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 13998 |
| 77 | ՓՏ-ի վերանորոգում | 41995 |
| 78 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 2352 |
| 79 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | 11479 |
| 80 | Վազքաչափի շարժաբերի փոխարինում | 4759 |
| 81 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում | 16518 |
| 82 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում | 26877 |
| 83 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում | 25197 |
| 84 | ԱՓՏ-ի վերանորոգում | 16518 |
| 85 | ԱՓՏ-ի յուղի փոխարինում | 6999 |
| 86 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | 6999 |
| | **5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | |
| 87 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | 9239 |
| 88 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով | 30516 |
| 89 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում | 6439 |
| 90 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | 5319 |
| 91 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ. | 4759 |
| 92 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | 5879 |
| 93 | Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում | 6719 |
| | **6. Առջևի և հետևի կամրջակներ** | |
| 94 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | 11199 |
| 95 | Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում | 30236 |
| 96 | Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում | 16518 |
| 97 | Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր. | 5319 |
| 98 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | 3808 |
| | **7. Կախոց** | |
| 99 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում | 11479 |
| 100 | Տրավերսի հանում և տեղադրում | 6999 |
| 101 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | 5487 |
| 102 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 5487 |

| | | |
|---|---|---|
| 103 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար | 3808 |
| 104 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 5487 |
| 105 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար | 5487 |
| 106 | Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում | 2688 |
| 107 | Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում | 2688 |
| 108 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 2688 |
| 109 | Զսպանակի հանում և տեղադրում | 2688 |
| 110 | Զսպակի հանում և տեղադրում | 2688 |
| 111 | Զսպակի վռանների փոխարինում | 3808 |
| 112 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 2688 |
| 113 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 2520 |
| 114 | Ներքևի լծակի վռանի փոխարինում | 2520 |
| 115 | Առջևի աջ կամ ձախ ձգանի հանում և տեղադրում | 2688 |
| 116 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 2688 |
| 117 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | 1008 |
| 118 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 2688 |
| 119 | Վերևի լծակի վռանների փոխարինում | 2968 |
| 120 | Գնդե հողակապերի փոխարինում | 3808 |
| 121 | Ծայրակաների հանում և տեղադրում | 2296 |
| 122 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 3808 |
| 123 | Առջևի կայունարարի վռանի փոխարինում | 1568 |
| 124 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում | 1568 |
| 125 | Հետևի զսպանակի փոխարինում | 2128 |
| 126 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 2128 |
| 127 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում | 3808 |
| 128 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 3808 |
| 129 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | 3808 |
| 130 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | 2688 |
| 131 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում | 2688 |
| 132 | Անվաբացքի կարգավորում | 3808 |
| 133 | Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար | 1400 |
| | **8. Ղեկային մեխանիզմ** | |
| 134 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | 6999 |
| 135 | Նույնը V6-ի համար | 13438 |
| 136 | Ղեկային կալունի վերանորոգում | 22397 |
| 137 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում | 2128 |

| | | |
|---|---|---|
| 138 | ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում | 3808 |
| 139 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում | 6439 |
| 140 | Նույնը DOHC դեպքում | 6439 |
| 141 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում | 2128 |
| 142 | Նույնը DOHC դեպքում | 2128 |
| 143 | Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում | 2128 |
| 144 | Նույնը DOHC դեպքում | 2128 |
| 145 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 6439 |
| 146 | ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում | 5487 |
| 147 | ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում | 6047 |
| | **9. Արգելակային համակարգ** | |
| 148 | Գլխ. գլանի հանում և տեղադրում | 6439 |
| 149 | Գլխ. գլանի վերանորոգում | 6439 |
| 150 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում | 6439 |
| 151 | Բանվ.  գլանի հանում և տեղադրում | 6439 |
| 152 | Բանվ.  գլանի վերանորոգում | 6439 |
| 153 | Արգելակային համակարգի օդահանում | 2128 |
| 154 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | 3808 |
| 155 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում | 3808 |
| 156 | Առջևի սուպպորտի վերանորոգում | 3808 |
| 157 | Հետևի սուպպորտի վերանորոգում | 3808 |
| 158 | Արգելակային փողրակի փոխարինում | 1008 |
| 159 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 1568 |
| 160 | Հետևի սկավառակային  կոճղակների փոխարինում | 1568 |
| 161 | Հետևի  կոճղակների փոխարինում | 1568 |
| 162 | Առջևի արգելակային  սկավառակի փոխարինում | 2128 |
| 163 | Հետևի արգելակային  սկավառակի փոխարինում | 2128 |
| 164 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում | 2128 |
| 165 | ABS-ի հանում և տեղադրում | 4479 |
| 166 | ABS-ի վերանորոգում | 8399 |
| 167 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | 4479 |
| 168 | Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում | 2128 |
| | **10. Էլեկտրասարքավորում** | |
| 169 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 2520 |
| 170 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 3920 |
| 171 | Գեներատորի հանում և տեղադրում | 3080 |

| | | |
|---|---|---|
| 172 | Նույնը V6-ի դեպքում | 4200 |
| 173 | Նույնը հիդրոուժեղարարի դեպքում | 5487 |
| 174 | Գեներատորի վերանորոգում | 3808 |
| 175 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 3808 |
| 176 | Մեկնարկիչի վերանորոգում | 3808 |
| 177 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 1400 |
| 178 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 1400 |
| 179 | Բռնկման կողպեքի հանում և տեղադրում | 1960 |
| 180 | Վազքաչափի հանում և տեղադրում | 3640 |
| 181 | Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում | 2128 |
| 182 | Սարքերի պանելի հանում և տեղադրում | 6439 |
| 183 | Արագաչափի հանում և տեղադրում | 4759 |
| 184 | Ազդանշանի հանում և տեղադրում | 2520 |
| 185 | Ապակեւլվացիչի շարժիչի հանում և տեղադրում | 2520 |
| 186 | Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում | 5039 |
| 187 | Ազդանշանային համակարգի տեղադրում | 2520 |
| 188 | Մագնիտոլայի տեղադրում | 2520 |
| 189 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում | 2520 |
| 190 | էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում | 4479 |
| 191 | էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում | 6439 |
| 192 | էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում | 3920 |
| 193 | էլեկտրական տվիչների փոխարինում | 1008 |
| 194 | էլեկտրական անջատիչների փոխարինում | 1008 |
| 195 | Վառոցքի մոմի փոխարինում | 1512 |
| 196 | Կոնդիցիոների լիցքավորում | 6047 |
| 197 | Կոնդիցիոների վերանորոգում | 2520 |
| 198 | Կուտակային մարտկոցների փոխարինում | 504 |
| | **11. Այլ ծառայություններ** | |
| 199 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար | 2520 |
| 200 | Ավտոմեքենայի լվացում | 756 |
| 201 | Անիվի հանում և տեղադրում | 504 |
| 202 | Անվադողի վերանորոգում | 1400 |
| 203 | Անիվի բալանսավորում | 504 |
| 204 | Անիվի վալց | 2520 |
| 205 | CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար | 2520 |

| | | |
|---|---|---|
| 206 | Խառատային աշխատանքներ 1 ժամ | 2520 |
| 207 | Փականագործի աշխատանքներ 1 ժամ | 2520 |
| 208 | Քարշարկի ծառայություն  գին 1կմ, համար | 756 |
| | SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | |
| | 1.Շարժիչ | |
| 1 | Շարժիչի բլոկ | 139983 |
| 2 | Շարժիչի գլխիկ | 8399 |
| 3 | Բարձիկ | 6719 |
| 4 | Շարժիչի գլխիկի միջադիր | 4479 |
| 5 | Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ | 16798 |
| 6 | Շարժիչի բաշխիչ լիսեռ | 27997 |
| 7 | Շարժիչի փական դուրս մղող | 1512 |
| 8 | Շարժիչի փական ներս մղող | 1512 |
| 9 | Շարժիչի փականի խցուկ | 504 |
| 10 | Ծնկաձև լիսեռ | 44795 |
| 11 | Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի | 2520 |
| 12 | Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի | 2520 |
| 13 | Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ | 5039 |
| 14 | Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ | 8399 |
| 15 | Հենակային տափողակ | 1008 |
| 16 | Մխոց | 15678 |
| 17 | Մխոցային օղակներ | 12319 |
| 18 | Ատամնանիվ | 5039 |
| 19 | Ատամնավոր փոկ | 15678 |
| 20 | Շղթա | 10079 |
| 21 | Հիդրոձգան | 6439 |
| 22 | Հրիչ | 2520 |
| 23 | Հիդրոհրիչ | 4367 |
| 24 | Բաշմակ | 3808 |
| 25 | Հանգստարար | 2128 |
| 26 | Թափանիվ | 7167 |
| 27 | Թափանիվի պսակ | 1512 |
| 28 | Խցուկ բաշխիչ լիսեռի | 504 |
| 29 | Շկիվ | 7559 |
| 30 | Շարժաթև | 5039 |

| | | |
|---|---|---|
| 31 | Կարտերի միջադիր | 1008 |
| 32 | Միջադիր | 6831 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 33 | Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր<br>(Բարձրորակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան) | 1764 |
| 34 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր<br>(Բարձրորակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան) | 2016 |
| 35 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր<br>(Բարձրորակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան) | 2520 |
| 36 | Յուղի զտիչ | 1260 |
| 37 | Յուղի պոմպ | 10079 |
| 38 | Յուղի պոմպի շարժաբեր | 13998 |
| 39 | Յուղի ռադիատոր | 5039 |
| 40 | Յուղի փողրակ | 2016 |
| 41 | Յուղի ծորակ | 2520 |
| 43 | Վառոցքի մոմ | 2016 |
| 44 | Բենզոբաք | 15678 |
| 45 | Խառնարակ | 1512 |
| 46 | Խառնարակի վերանորոգման հավաքածու | 13998 |
| 47 | Ինժեկտորի ֆորսունկա | 5039 |
| 48 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 5039 |
| 49 | Վառելանյութի մղիչ մեխանիկական | 1512 |
| 50 | Վառելանյութի զտիչ | 12319 |
| 51 | Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման | 1960 |
| 52 | Վառելանյութի փողրակ | 3248 |
| 53 | Աքսելերատորի ճոպան | 4367 |
| 54 | Օդի զտիչ | 2016 |
| 55 | Ջերմաստիճանային տվիչ | 6607 |
| 56 | Յուղի տվիչ | 6607 |
| 57 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 6607 |
| 58 | Օդի ծախսի տվիչ | 15958 |
| 59 | Արագաչափի տվիչ | 6439 |
| 60 | Հովհարի տվիչ | 6439 |
| 61 | Ջրի տվիչ | 6439 |
| 62 | Բենզոբաքի տվիչ | 6439 |
| 63 | Մարման ընթացքի կարգավորիչ | 6439 |

| | | |
|---|---|---|
| 64 | Մարման ընթացքի տվիչ | 6439 |
| 65 | Ղեկավարման համակարգիչ | 10919 |
| 66 | Պարապ ընթացքի տվիչ | 6999 |
| 67 | Դրոսելային փականի տվիչ | 6999 |
| 68 | Թթվածնի տվիչ | 6999 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 69 | Հովհարի փոկ | 3864 |
| 70 | Հովհար | 7223 |
| 71 | Ռադիատոր | 19598 |
| 72 | Ընդարձակող բաք | 6999 |
| 73 | Ռադիատորի փողրակ | 3864 |
| 74 | Թերմոստատ | 6999 |
| 75 | Ջրի պոմպ | 9799 |
| 76 | Ջրի պոմպի առանցքակալ | 1960 |
| 77 | Ջրի պոմպի թևակ | 5543 |
| 78 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 1064 |
| 79 | Ջրի պոմպի սռնանիվ | 840 |
| 80 | Հոլովակ | 840 |
| 81 | Փոկ | 2184 |
| 82 | Փոկ կոնդիցիոների | 672 |
| 83 | Ծորակ | 2184 |
| 84 | Խլարարի ներդիր | 1064 |
| 85 | Խլարարի կախոց | 1064 |
| 86 | Կրոնշտեյն | 672 |
| 87 | Անուր (Խամուտ) | 252 |
| 88 | Խլարար | 21837 |
| 89 | Ռեզոնատոր | 10639 |
| 90 | Վառարանի ռադիատոր | 13998 |
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | |
| 91 | Կցորդման բանվորական գլան | 10023 |
| 92 | Կցորդման գլխավոր գլան | 8343 |
| 93 | Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու | 5543 |
| 94 | Կցորդման տանող սկավառակ | 7783 |
| 95 | Կցորդման տարվող սկավառակ | 7783 |
| 96 | Կցորդման առանցքակալ | 5543 |
| 97 | Կցորդման փողրակ | 2520 |

| | | |
|---|---|---|
| 98 | Փոխանցման տուփ | 223974 |
| 99 | ՓՏ-ի առջևի խցուկ | 3640 |
| 100 | ՓՏ-ի հետևի խցուկ | 3640 |
| 101 | ՓՏ-ի առանցքակալ | 5319 |
| 102 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | 10919 |
| 103 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռ | 10023 |
| 104 | ՓՏ-ի եղանիկ | 8679 |
| 105 | ՓՏ-ի ատամնանիվ | 8679 |
| 106 | Համաժամիչ | 6663 |
| 107 | Մուֆտ | 16518 |
| 108 | ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 8399 |
| 109 | ԱՓՏ-ի զտիչ | 14502 |
| 110 | ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու | 21837 |
| 111 | ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 25197 |
| 112 | Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր | 3640 |
| 113 | ԱՓՏ յուղ, 1 լիտր | 5039 |
| 114 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | 1008 |
| 115 | Հերմետիկ 125գր | 1960 |
| | 5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ | |
| 116 | Բաշխիչ տուփ | 55433 |
| 117 | Բաշխիչ տուփի խցուկ | 6719 |
| 118 | Բաշխիչ տուփի առանցքակալ | 5039 |
| 119 | Բաշխիչ տուփի ատամնանիվ | 10639 |
| 120 | Բաշխիչ տուփի լիսեռ | 12599 |
| 121 | Կարդանային լիսեռ | 10919 |
| 122 | Էլաստիկ մուֆտ | 10023 |
| 123 | Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ | 10023 |
| 124 | Կարդանային լիսեռի խաչուկ | 6663 |
| | 6. Առջևի և հետևի կամրջակներ | |
| 125 | Հետևի կամ առջևի կամրջակ | 89029 |
| 126 | Ռեդուկտոր | 19598 |
| 127 | Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ | 5039 |
| 128 | Դիֆֆերենցիալ | 5039 |
| 129 | Դիֆֆերենցիալի սատելլիտ | 5039 |
| 130 | Տանող ատամնանիվի խցուկ | 4032 |
| 131 | Տանող ատամնանիվի առանցքակալ | 4032 |

| | | |
|---|---|---|
| 132 | Դիֆֆերենցիալի առանցքակալ | 5879 |
| 133 | Կիսասռնի | 10023 |
| 134 | Կիսասռնու առանցքակալ | 4423 |
| 135 | Կիսասռնու միջադիր | 4423 |
| 136 | Կիսասռնու խցուկ | 3528 |
| 137 | Կարգավորիչ տափողակ | 1260 |
| | **7. Կախոց** | |
| 138 | Տրավերս | 10919 |
| 139 | Կրոնշտեյն | 1008 |
| 140 | Ձախ կամ աջ հողակապ | 15398 |
| 141 | Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց | 3024 |
| 142 | Անվակունդ | 10919 |
| 143 | Անվակունդի խցուկ | 2520 |
| 144 | Անվակունդի ներքին առանցքակալ | 6439 |
| 145 | Անվակունդի արտաքին առանցքակալ | 6439 |
| 146 | Հետևի անվակունդի ներքին առանցքակալ | 6439 |
| 147 | Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ | 6439 |
| 148 | Ձախ կամ աջ հողակապի խցուկ | 2520 |
| 149 | Հարվածամեղմիչի թասակ | 4423 |
| 150 | Զսպանակ | 5543 |
| 151 | Առջևի հարվածամեղմիչ | 11143 |
| 152 | Հարվածամեղմիչի փոշեթիկնոց | 2520 |
| 153 | Հարվածամեղմիչի վռան | 1512 |
| 154 | Ներքևի լծակ | 11143 |
| 155 | Ներքևի լծակի վռան | 2016 |
| 156 | Վերևի լծակ | 12599 |
| 157 | Վերևի լծակի վռան | 2520 |
| 158 | Գնդե հողակապ | 3864 |
| 159 | Առջևի կայունարար | 6159 |
| 160 | Առջևի կայունարարի վռան | 1512 |
| 161 | Առջևի կայունարարի առջևի վռան | 1260 |
| 162 | Հետևի զսպանակ | 4200 |
| 163 | Հետևի ցնցամեղմիչ | 9239 |
| 164 | Հետևի մետաղածող (շտանգա) | 6999 |
| 165 | Հետևի մետաղածողի (շտանգա) վռան | 2016 |
| 166 | Հետևի անկյունագծային լծակ | 4423 |

| | | |
|---|---|---|
| 167 | Անկյունագծային լծակի վռան | 2520 |
| 168 | Զսպակ (ռեսսորա) | 21837 |
| 169 | Զսպակի վռան | 3640 |
| 170 | Զսպակի միջադիր | 3640 |
| 171 | Զսպակի բռնիչ | 3640 |
| 172 | Աջ կամ ձախ ձգան | 3640 |
| 173 | Ծայրակալ | 3640 |
| 174 | Ձգան մեջտեղի | 2520 |
| 175 | Անվահեծ | 8959 |
| | **8. Ղեկային մեխանիզմ** | |
| 176 | Ղեկային կալուն | 33036 |
| 177 | Ղեկային կալունի առանցքակալ | 2520 |
| 178 | Ղեկային կալունի խաչուկ | 6999 |
| 179 | Հիդրոուժեղարար | 4423 |
| 180 | Հիդրոուժեղարարի փոկ | 2520 |
| 181 | Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ | 4423 |
| 182 | Հիդրոուժեղարարի պոմպ | 9519 |
| 183 | Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ | 4423 |
| 184 | Ղեկային ձող | 2520 |
| 185 | Ղեկային ձողի ծայրակալ | 2520 |
| 186 | Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր | 2520 |
| 187 | Ճոճանակ | 6663 |
| 188 | Ճոճանակի վռան | 1008 |
| | **9 Արգելակային համակարգ** | |
| 189 | Գլխ. գլան | 8343 |
| 190 | Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 3864 |
| 191 | Վակուումային ուժեղարար | 10023 |
| 192 | Բանվ. գլան | 6439 |
| 193 | Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 2520 |
| 194 | Արգելակային փողրակ | 1008 |
| 195 | Սուպպորտի ուղղորդիչ | 2016 |
| 196 | Սուպպորտի մանժետ | 2184 |
| 197 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 11143 |
| 198 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ | 8399 |
| 199 | Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ | 6439 |
| 200 | Առջևի արգելակային սկավառակ | 8959 |

| | | |
|---|---|---|
| 201 | Հետևի արգելակային սկավառակ | 8959 |
| 202 | Ձեռքի արգելակի ճոպան | 2520 |
| 203 | ABS-ի տվիչ | 2520 |
| 204 | Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ | 1260 |
| 205 | Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ | 2016 |
| 206 | Ձեռքի արգելակի ճոպան | 4032 |
| | **10 էլեկտրասարքավորում** | |
| 207 | Գեներատոր | 16798 |
| 208 | Գեներատորի դիոդային կամրջակ | 2520 |
| 209 | Գեներատորի ռելե | 6439 |
| 210 | Գեներատորի առանցքակալ | 2520 |
| 211 | Ստարտեր | 2520 |
| 212 | Ստարտերի ռելե | 27997 |
| 213 | Ստարտերի ածուխ | 5039 |
| 214 | Բենդեքս | 4479 |
| 215 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | 4423 |
| 216 | Առջևի լապտեր | 4423 |
| 217 | Առջևի թարթիչ | 10639 |
| 218 | Հետևի լապտեր | 2520 |
| 219 | Հետևի թարթիչ | 5039 |
| 220 | Արգելակային լապտեր | 2520 |
| 221 | Լամպ | 3864 |
| 222 | Էլեկտրական անջատիչ | 2520 |
| 223 | Էլեկտրական տվիչ | 504 |
| 224 | Էլեկտրական չափիչ սարք | 504 |
| 225 | Բռնկման կոճակ | 504 |
| 226 | Էլեկտրալարերի գլխավոր խուրց | 2520 |
| 227 | Էլեկտրալարերի երկրորդային խուրց | 16742 |
| 228 | Վառոցքային լարերի խուրց | 6439 |
| 229 | Վառոցքի մոմի ծայրակալ | 5543 |
| 230 | Վազքաչափ (մեքենայի կմ) | 1008 |
| 231 | Վազքաչափի ճոպան | 1008 |
| 232 | Արագաչափ | 2520 |
| 233 | Ազդանշան | 2520 |
| 234 | Ապակելվացիչ | 4423 |
| 235 | Ապակելվացիչի շարժիչ | 1512 |

| | | |
|---|---|---|
| 236 | Դռների կենտրոնական փական | 2520 |
| 237 | Ազդանշանային համակարգ | 2520 |
| 238 | Մագնիտոլա | 10079 |
| 239 | էլեկտրաամբարձիչ | 10919 |
| 240 | էլեկտրաամբարձիչի շարժիչ | 4423 |
| 241 | Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր *գին 1դ/մ վերանորգման համար* | 5543 |
| 242 | Կուտակային մարտկոցներ | 13998 |
| | **Ընդամենը** | 3350000 |

Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է՝
SU – 1 ծառայություն / տեխ. զննում՝ ըստ հավելվածի/,
SU – 2 ծառայություն/ տեխ.սպասարկում և վերանորոգում՝ ըստ հավելվածի:
*1 - պարտադիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը,*
*2 - տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում: Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 3 էլեկտրական ամբարձիչներով, անվաբացքի ուղղման ստենդով, ինժեկտորների լվացման ստենդով, թափքի ուղղման ստենդ, չորացման, դիտահոր: Ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:*
*3- Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում՝ մեկօրյա ժամկետում, պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին:*

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «Գարանտ Մոթորս» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ | Հասցեն՝ ք.Երևան, Թբիլիսյան խճ. 20 |
| Կառավարական տուն 1 | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հ/Հ 2470075092810000 |
| Հ/Հ | ՀՎՀՀ 01310872 |
| ՀՎՀՀ 02505554 | Տնօրեն |
| ------------------------------ | ------------------------------ Դ.Շախբազյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 2*
*« » 2025թ. կնքված*
*ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/3-1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 50111130/531 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% |

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*
** Ծառայությունների մատուցման դիմաց վճարումները կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

---------------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Գարանտ Մոթորս» ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Թբիլիսյան խճ. 20
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470075092810000
ՀՎՀՀ 01310872
Տնօրեն

------------------------------------- Դ.Շախբազյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*«        »              2025թ. կնքված*
*ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/3-1 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«      » «             » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝   __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » «             » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«          »                    2025թ. կնքված*
*ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/3-1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի
Պատվիրատուի անունը                                        Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20     թ. _______________________ -ին կնքված N _______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«    »    2025թ. կնքված*
*ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/3-1 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________-ի և ______________________-ի միջև «--»    20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը    կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

______________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________ ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»    20 թ.